

Գլխավոր մասնաշենք

ՀԱԷԿ-ի գլխավոր մասնաշենքը իրենից ներկայացնում է բարդ շինություն, որը բաղկացած է մի քանի իրար հետ կապակցված շենքերից .

- Տուրբինային արտադրամաս
- Էլեկտրասարքավորումների երկայնական և լայնական հարկաբաժիններ
- Ռեակտորային արտադրամաս
- Օդափոխիչ կենտրոն

1.1.- 1.3. նկարներում տրված են ԳՄ-ի հատակագիծը, երկայնական և լայնական կտրվածքները:

Տուրբինային արտադրամասը (SS) տեղակայված է «Ա» և «Բ» շենքերի հենասյուների միջև և իրենից ներկայացնում է երկաթե շրջանակային կոնստրուկցիա:

Ուղղահայաց բեռնակառության կրող համակարգը բաղկացած է եկաթե ֆերմաներից, որոնք հենվում են հենասյուների գետնի մակարդակից մոտ 25մ բարձրության վրա: Երկաթե ֆերմաները ծածկի բեռնակառությունը փոխանցում են երկաթե հենասյուներին, որոնք հենված են անմիջապես բազալտի վրա թափված մոնոլիտ երկաթետոնե հիմքերի վրա:

SU-ում տեղակայված է 100/20/5տ բեռնաբարձությամբ կամրջակային կոունկ, որը տեղաշարժվում է +20,7մ բարձրության վրա ամրացված երկաթե ուղիներով:

Էլեկտրասարքավորումների երկայնական հարկաբաժինը (ԷԵՀ) տեղակայված է «Բ» և «Վ» շարքերի հենասյուների միջև:


Ծածկը կրող երկաթե բալկաները տեղադրված են թեք՝ «Վ» շարքի հենասյուների վրա +31,6մ բարձրությունից մինչև «Բ» շարքի հենասյուների վրա +27,45մ բարձրությունը: «Վ» շարքի երկաթե հենասյուները +10,5մ բարձրության վրա հենվում են ՌԱ-ի երկաթետոնե կառուցվածքի վրա և միացված են «Բ» շարքի հենասյուներին երկաթե բալկաներով, որոնք տեղադրված են 5 տարբեր հարթությունների վրա:

ՌԱ-ը տեղակայված է «Վ» և «Գ» շարքերի միջև և +10,5մ-ից բարձր ներկայացված է երկաթե շրջանակային կոնստրուկցիայով, որն ունի 39մ լայնություն, հենասյուները գտնվում են իրարից 6մ հեռավորության վրա, իսկ ծածկը հենվում է +31,9մ բարձրությունում: +19,8մ բարձրության վրա տեղակայված են երկու օժանդակ կոունկներ 30/5տ բեռնաբարձությամբ, իսկ +25,2մ-ում մեկ ծանր կոունկ 250/50տ բեռնաբարձությամբ:

Չորսհարկանի օդափոխման կենտրոնը (ՕԿ) տեղակայված է ՌԱ-ին անմիջապես կից «Գ» և «Դ» շարքերի միջև և ունի 12մ լայնություն: +10,5մ բարձրությունից ներքև ՌԱ-ն և ՕԿ-ն ունեն ընդհանուր երկաթետոնե կառուցվածք և հիմք մինչև 2,6մ հաստությամբ, որը հենվում է անմիջապես բազալտի շերտի վրա:


Ասբ պեդ. Ս. Մադաթյան

рис.1.1. План ГК,



АМЭС

Рис.1.2 Поперечный разрез главного корпуса



Handwritten signature

Collo

Рис.1.3 Продольный разрез ГК

Armenian NPP, Medzanor
Main Building, Longitudinal Cross - Section
Հայկական ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ԿԵՆՏՐԱԼԻ ՎԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲՆԱՐԱՆԻ ԲԱՆԱԿԱՆ ԵՐԱՐՈՒՄԻ ԼՈՆԳԻՏՈՐԱԿԱՆ ՎՈՐՈՒՄ





Fig. 5

Դիզել-գեներատորային կայանի շենք

Դիզել-գեներատորային շենքը հատակագծում իրենից ներկայացնում է 54մ երկարությամբ և 18մ լայնությամբ ուղղանկյուն: Շենքի վերգետնյա բարձրությունը մոտավորապես 11մ է, իսկ ստորգետնյան 4մ: Շենքը բաղկացած է երեք միանման բաժանմունքներից, որոնցից յուրաքանչյուրում տեղադրված են երկուական դիզել-գեներատոր (12 X 18 մ չափսերի սրահում) և օժանդակ տեղամասից (6 X 18 մ չափի):

Рис.2. 1 План фундамента здания дизель-генераторной станции




Բաժանմունքներից յուրաքանչյուրում տեղակայված են մեկական կամրջակային ամբարձիչ՝ դիզել-գեներատորների սպասարկման համար: Դիզել-գեներատորային շենքը ունի երեք մակարդակ՝

- կիսահարկ (4,2մ) , որտեղ գտնվում են մարտկոցները և էլեկտրոկահանները
- 0-ական մակարդակ, որտեղ տեղակայված են վառելիքային բաքերը
- մկուղային հարկ, որտեղ տեղադրված են դիզել-գեներատորները:

Դիզել-գեներատորները տեղադրված են 3,8մ բարձրությամբ երկաթբետոնե հենասալերի վրա, որոնք առանձնացված են շենքի հիմքերից՝ տատանումների չեզոքացման մպատակով:

[Handwritten signature]



F Гц	0,5	0,67	1	1,33	2	3,33	5	6,67	10	20	50
Sa	0,105	0,147	0,227	0,308	0,464	0,725	0,966	1,048	0,927	0,604	0,416
PGA											

Рис.3 Однородный спектр ответа опасности (UHRS) ААЭС